

Շարունակե՛լ, շարունակե՛լ:  
 Քո կտակ կատարի միշտ,  
 Դու մի հոգար, հանգիստ եղիր,  
 Ողբացեալ Մայր Հայաստան  
 Ծնանի նա միշտ իւր ողբերգակ:  
 Շատ են և շատ ձայնարկուք,  
 Եմ՝ եմ՝ և ես մի ձայնարկու  
 Շարունակող ողբերգութեանդ,  
 Յորչափ շնչէ շունչն ի հոգիս,  
 Մովսիսի ողբացողիդ  
 Կտակակատար ՀԱՅՈՅ ՀԱՅՐԻԿ,

## Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԻՍԿՈՒԹԻԻՆԸ.

Ե.

ԱՍԻՍԿՈՅՆ ԱՐԿԱՐՈՒԹԻԻՆԸ:

**Ա**ՍԻՍԿՈՅՆԻ երկու էական գաղափարները որոշե-  
 լուց յետոյ երրորդն ըստ ինքեան հետեւում է-  
 րբբ գիտենք՝ ինչ է Աստուած մեզ համար, գժուար չի  
 լինի այլևս ըմբռնել, թէ ինչ է պահանջում նա մեզնից,  
 ինչ սկզբունքներով է կամենում, որ առաջնորդուենք  
 կեանքի մէջ։ Քրիստոնէութեան նկատմամբ ամենամեծ  
 թիւրիմացութիւններէց մէկն այն է, որ շատերը կարծում  
 են, թէ կարելի է ամենեւին նշանակութիւն չտալ նորա  
 կրօնական հիմունքներին, չընդունել նորա դաւանական

ճշմարտութիւնները, և այնուամենայնիւ բարձր դնահատել նորա բարոյական սկզբունքներն ու նոցա համաձայն կեանք վարել: Սակայն արդէն հնուին դարաւոր փորձից յետոյ մարդիկ հատել էին այն եղբակացութեան, թէ լոկ ազնուութեան ու բարութեան խրատներ տալով ոչ ոքի ազնիւ և բարի դարձնել չի կարելի: Երբ աւետարանի քարոզութիւնն սկսուեցաւ՝ ժամանակի լուսաւորութեան կենտրոններում հետաքրքրութեան գլխաւոր առարկան մարդոց բարոյական կեանքն էր, բայց որչափ շատ էին ճառում և գրում բարոյական սկզբունքների մասին, որչափ աւելի բանաւոր հիմունքներով բացատրում բարոյական օրէնքների վսեմութիւնն ու կարեօրութիւնը՝ այնչափ աւելի քիչ էին դտնուում հեռուողներ այդ կանոնների, անբարոյականութիւնն աճում և ահռելի կերպարանք էր ստանում: Աւետարանը ճշմարիտ բարոյականութեան ազբւրբ ցոյց տուեց և շատ պատկառող հոգիներ շտապեցին այնտեղ իրենց ծարաւը յադեցնելու. կեանքը կերպարանափոխ եղաւ և նոր զօրութիւններ սկսեցին իշխել նորա վերայ, նոր ընթացք և նոր բովանդակութիւն տալ նորան: Այժմ այդ նոր կեանքն ևս հնացել է ըստ երևութին և նորութիւնների սիրահար մարդկութիւնը կրկին նոր առաջնորդող սկզբունքներ է որոնում: Նա չի կարող չխոստովանել, որ քրիստոնէական բարոյականութիւնը իւր համար անհասանելի բարձրութիւն է ներկայացնում, և դեռ ոչ մի հանճարեղ միտք այդ բարձրութեան միւս կողմը չի անցել, բայց մեր ժառանակի իմաստունները երեւակայում են, թէ քրիստոնէական բարոյականութիւնը նորա համար մեծ ոյժ չունի և հարկաւոր ազդեցութիւնը չի գործում ներկայ սերունդի վերայ, որ զանազան կրօնական տեսութիւններ նորա ուղիղ ըմբռնման արգելք են լինում և լուսաւորութեան հետու պահում նորանից: Եւ սակայն քրիստոնէական բարոյականութեան էութիւնը՝ նորան ընդունող և ամէն տեսակ բարոյագիտական համակարգութիւնների նկատմամբ առաւելութիւն տուող կողմը հենց այն է, որ նա հաւատքից է բղխում, ոչ հարկաւ

բուն կրօնական կեանքի հետ անմիջական առնչութիւն չունեցող վերացական տեսութիւններէից, այլ այն հաստատուն համոզումից, թէ իրերի նիւթական դրութեան ետե՛ նորա վերայ իշխող, մի հոգևոր, մի բարոյական դրութիւն կայ, որ մարդկային կեանքի ազբիւրն է, սրով անուել, որի համաձայն ընթանալ, գէպի որն ամբողջ էութեամբ ձգտել պէտք է՝ ճշմարիտ կեանք ունենալու և վախճանական նպատակին հասնելու համար: Իսկ երբ գիտենք, որ այդ հոգևոր դրութեան մէջ իշխողը մի բարի հօր անսասան կամքն է, որ ամբողջ արեղերքը սուղող կենդանութեան ազբիւրը սիրող սրտից է բղխում՝ մեզ համար այլ ևս կասկած չինել չի կարող, թէ մեր սեփական կեանքի առաջնորդող սկզբունքն ինչ պէտք է լինի. լուսոյ մի շաւիղ գծուած է մեր հանգէպ, որի վերայ վստահ ենք, թէ պէտք է անսայթաք յառաջ գնանք:

Ըստ այսմ՝ քրիստոնէական բարոյականութեան համար առաջին ամենակարեւոր կէտն է՝ ըմբռնել, որ բարոյական արժէք ունի միայն համոզմունքով կատարած և հաւատոյ արգիւնք եղող գործը: Երբ հրէաները հարցնում էին Փրկչին, թէ ինչ պէտք է անեն որ արդար լինեն՝ նա ցոյց էր տալիս օրէնքը. ս. Գրքի մէջ կէտ առ կէտ որոշուած էր արդարութեան պահանջը. հարկաւոր էր միայն հասկանալ և կատարել այն, ինչպէս Աստուած կամեցել էր: Եւ սակայն նա իւր հետեւողներէից պահանջում էր տարբեր և աւելի բարձր արդարութիւն, քան ունէին փարիսեցիները, որոնք այնչափ հետամուտ էին օրէնքի իւրաքանչիւր տառն ամենայն ճշտութեամբ կատարելու: Ինչո՞ւ այդպէս: Հարկաւ առաջինը նորա համար, որ փարիսեցիները տառապաշտ էին, յաճախ քմահաճ բացատրութիւններ տալով տառին՝ կատարում էին ո՛չ թէ Աստուծոյ կամքը, այլ սեփական ցանկութիւնների թելադրութիւնը. բայց այդ էականը չէր. նոյն իսկ խղճի մտօք և ամենայն ճշտութեամբ կատարուած օրէնքը մնում էր միշտ օրէնք՝ դրսից եկած մի հրաման, որ կարելի էր կատարել խօսքով ու գործով, առանց հոգւով մասնակցելու և սրտի մէջ մի բան զգա-

լու, այդպէս էլ նորա կատարում էին: Իսկ Փրկիչն այն էր առաջ հարցնում, թէ հոգու մէջ ինչ է կատարուում: Նա, վերցնելով Հին Կտակարանի հիմնական օրէնքները՝ ցոյց է տալիս մի առ մի, թէ ինչպիսի բարոյական սկզբունքներից են նորա բղխում, և ապա հասկացնում է, որ միայն այդ սկզբունքները լուրացնելուց և ներքին ու արտաքին բոլոր շարժումները նոցա համաձայն սեղգելուց յետոյ կարելի է ասել, թէ բուն պատուէրը կատարել ենք:

Այդ պատճառով Նա խոսիւ գատապարտում է Հին ու նոր աշխարհի այն յայտնի փարիսեցիութիւնը, որ չի հարցնում, թէ ո՞վ է գործում և ի՞նչ գրգիշներով, այլ թէ ո՞ւմ համար և ի՞նչ նպատակով է գործած, և ուրեմն ամէնից բարձր է գնահատում այն գործերը, որոնք ըստ երևութին անմիջապէս Աստուծոյ համար են—պաշտամունքն ու զօհն ու ծովապահութիւնը: Բունն զայսոյթ է յայտնում Փրկիչն այն կեղծ ու անհոգի բարեպաշտներին դէմ, որոնք սովորեցնում են ծնողին ու եղբորը զրկել, նոցա բերանից վերջին պատառը խլել, ու նուէր բերել Աստուծոյ սեղանին. Նա վերանորոգում է Իսրայէլի մեծ մարդարէնների այնքան անդամ կրկնուած ու անլսելի մնացած քարոզը, թէ Աստուած ողորմութիւն՝ սրտի գութ, է կամենում, և ո՛չ զօհ, թէ մերժելով մերժում է այն նուէրները, որոնք անմաքուր ձեռքով և ամբարշտութեամբ ու անիրաւութեամբ լի սրտով են բերուած: Այսպիսով Փրկիչը որոշ սահման է դնում պաշտամունքի և բարոյականութեան մէջ և պարզում, որ երբէք մէկը միւսին չպէտք է ծառայէ. այլ, ինչպէս ջերմեռանդ սրտից բղխած պաշտօնը միայն Աստուծուն հաճոյ լինել կարող է՝ այնպէս և միայն բարի սրտից բղխած բարի գործը ընդունելի մինչդեռ այն բարեգործութիւնը, որ կողմնակի նպատակով է կատարուում՝ լինի նոյն իսկ յանուն և ի հաճոյս Աստուծոյ, կեղծիք է միշտ և զուրկ ամէն բարոյական արժէքից:

Եւ սակայն լուրաքանչիւր բարի գործ, ինչպէս և ամէն բարեաց սկիզբ ու ծնունդ եղբայրական սիրոյ զգա-

ցումը՝ արդիւնք պէտք է լինի ճշմարիտ Աստուծոյ ճանաչողութեան և տեղի ունենալ չի կարող, եթէ մեր ամբողջ ներքին էութեամբ չենք խոնարհել Նորա առաջ և շերմացրել մեր սիրտը Նորա էութիւնից ծագող ճառագայթներով, որ համակ սէր է։ Բարին չպէտք է գործել Աստուծուն՝ իբրև վարձատրողի, հաճոյ լինելու դիտաւորութեամբ, բայց բարի համարել պէտք է այն միայն, որի համար ներքին զգացումն ասում է, թէ հաճոյ է Աստուծոյ, թէ կատարումն է Աստուծոյ կամքի։ Եւ եթէ մենք ընդունում ենք, որ սիրոյ մեծ սկզբունքը պէտք է բարոյական կեանքի ղեկավարողը լինի, ապա կարևոր է մի հաստատուն չափ ունենալ, որով կշռուի այն և իւր դադարակից բարձրութեան վերայ պահուի, հակառակ դէպքում ինչ մեղսական շարժումներ և ապօրինի ցանկութիւններ կարելի չէր սիրոյ անուան տակ ծածկել։ Ահա այդ չափն է տալիս Փրկիչը, երբ Իւր նշանաւոր բացատրութիւնները օրէնքի ուղիղ ըմբռնման մասին կնքում է մի բազմարժանեակ յորդորով. «Արդ, եղերսք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր Երկնաւոր կատարեալ է»։ Երկնաւոր Հօր կատարելութիւնը դիտելով ուրեմն կարող ենք միայն ըմբռնել, թէ ինչ է բարոյական կատարելութիւնը, և Նորա ողորմածութիւնից ու անյիշաչարութիւնից ողորմածութիւն, Նորա բարութիւնից բարութիւն, Նորա սիրուց սէր ճանաչել՝ դէպի Նա տաժամ կրօնական զգացմունքից բարոյական դործ յառաջ բերել, և այդպէս կատարելով մեր պարտքը ընկերի նկատմամբ՝ հատուցած լինել և Աստուծոյ առաջ ունեցած պարտքը։

Կ. Վ.

